Աղվանի

Բնակչություն՝ 69

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 36կմ
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720 մ
Կարգավիճակը՝ սահմանամերձ

Աղվանի գյուղը հիշատակվում է ուշ միջնադարից: Գյուղը 19-րդ դարում աստիճանաբար հայաթափվել է, բնակչությունը լքել է գյուղը և գյուղն ավերվել է: Գյուղը վերահիմնադրվել է 1923թ.՝ հարևան Տանձատափ գյուղից վերաբնակեցվածների կողմից: 1928թ. ստեղծվել է Աղվանու կոլտնտեսությունը և գյուղական խորհուրդը: 1952թ. գյուղական խորհուրդը լուծարվել է, կոլտնտեսությունը ընդգրկվել է Տանձավերի կոլտնտեսության, իսկ գյուղը Տանձավերի գյուղխորհրդի կազմում:
1991թ. Աղվանին անջատվել է Տանձավերի գյուղխորհրդից՝ կազմելով ինքնուրույն վարչական միավոր:
Գյուղի հարավային մասում կա 17-18 դդ. գերեզմանոց՝ տապանագիր խաչքարերով և բազալտե սրբատաշ քարերով կառուցված թաղակապ կիսավեր եկեղեցի: Գյուղից մոտ 400 մ ներքև, հարավ-արևմտյան մասում կան մ.թ.ա. 2-1 հզմ. դամբարանադաշտեր: Գյուղում կառուցված է 1941-45թթ. Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 998 հա, այդ թվում՝
Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 664 հա, որից՝ վարելահող՝ 77 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, խոտհարք՝ 81 հա, արոտ՝ 386 հա, այլ հողատեսք՝117 հա, բնակավայրերի հողեր՝ 26 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝2 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3 հա, անտառային հողեր՝ 301հա, որից անտառածածկ՝ 265 հա, ջրային հողեր՝ 2 հա: